

Հ. Բ. Շ. Մ.

ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

Հ Ա Յ Ե Ր Է Ն Ե Ր Գ Ե Զ

1965

ՄՆԵՂՈՆԵԱՆ ԿՐԹ. ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ
ԳԱՅԼԵՐԳ

Անմահ լուսոյ ճշմարտութեան բարիին
Տաճարն է այս սրբանրէք թանկագին
Ան մեզ տըլաւ նահատակուած մեր ցեղին
Չաւակներէն լաւագոյնը ու բարին:

Օհ ողջունենք անձկագին
Մեծ բարերարն Ազգային,
Ու իբ կանգնած կրթական
Այս տաճարը պատուական:

Ճեռք ձեռքի տանք մենք քոյր-եղբայր կաթողին
Միշտ դէպի վեր, դէպի առաջ խմբովին
Ու մեր սիրտը թող արեւով-ու-լոյսով
Հարուստ ըլլայ, առաքինի, անխրոսով:

Օհ ողջունենք.....

Ըլլանք հրպարտ աշխատանքով կորովի
Արուեստներու ու գիտութեան ծարաւի,
Եարկն այս վըսեմ, Ազգիս տունը լուսեղէն
Շող մը կաթե մեր միտքին մեջ իբ սրտէն:

Փառք ու պատիւ յաւիտեան
Լուսոյ անշէջ վառարան,
Կրթարանին Մեղգոնեան
Փառք ու պատիւ յաւիտեան:

ՆՐ ՆԻԱՆ

Գեղաբանդակ քո շէնքերն են բարձրացել,
Լարիդ անգամ շունչ են տուել, Նրեւան,
Հայոց հողի շահել սիրտն էս դու դարձել,
Լցուել հազար բերքով ու երգով, Նրեւան,
Քեզ հազար փառք, իմ նոր, իմ մայր, Նրեւան:

*ամա, Նրեւան
հայոց հողի շահել սիրտն էս դու դարձել*

Աղբիւրներդ զանգակներն են սառնորակ,
Որ զալիս են մեր Սեւանից կապուտակ
Քո քարերին բաշուել են վարդ ու մեխակ,
Փառքդ եմ երգում իմ նոր պայծառ, Նրեւան,
Նրբ որբ էի, ինձ մայր դարձար, Նրեւան:

Մասիս սարը քեզ նայելիս ցնծում է,
Նո նայելիս սգում եւ արտասուում է:
Հեռու ընկած պանդուխտի պէս թախծում է,
Լոյս է ուզում մեզ կարօտով, Նրեւան:
Քեզ համար փառք, իմ նոր, իմ մայր, Նրեւան:

*Սարսառ
շխարհ*

Իմ մայր

Գուսան Աշոտ, Նրեւանը դարուն է,
Գիշերները աստղերի ծով է, փայլուն է,
Ով տեսնում է, հազար անգամ տարւում է,
Բուրաստան էս, անուշ հոտով, Նրեւան,
Քեզ հազար փառք, իմ նոր, իմ մայր, Նրեւան:

*Իմ մայր
Նրեւան*

Գուսան Աշոտ

ՄԻԻՆԵԱՅ ՍԱՐԵՐ

Հազար ու մի երգում գոված սար եմ տեսել,
Բայց միշտ ձեր կարօտը քաշել, Միւնեաց սարեր:
Ասես մեծ վարպետն - Նաղաշի ձեռքն է հասել:
Ծաղիկներդ գոյն-գոյն նախշել, Միւնեաց սարեր,
Ինձ մօր սրտով ձեր գիրկն առէք, Միւնեաց սարեր,
Նայլաներիդ ծուխը սահող երամ դառած,
Իմ նազելին երամի մեջ երազ դառած:

Մարդուն քաջի ուժ կը տայ ձեր օդն ու ջուրը:
Սուրբ մօր նման օրօր կ'ասի զով զեփիւոր,
Աշխարհով մէկ տարածուել է ձեր անունը,
Ձեզ հազար ն խաղ եմ կանչել, Միւնեաց սարեր:
Ինձ մօր սրտով ձեր գիրկն առէք, Միւնեաց սարեր,
Նայլաներիդ ծուխը սահող երամ դառած,
Իմ նազելին երամի մեջ երազ դառած:

Գուսան Աշոտ, Միւնեաց հողը անարատ է,
Չարի սերմը բուն չի դնի՝ անարմատ է,
Մարդն արծիւ է, լեռնածին է, հրահատ է,
Հազար հողմեր ձեզ չեն մաշիլ, Միւնեաց սարեր:
Ինձ մօր սրտով ձեր գիրկն առէք, Միւնեաց սարեր,
Նայլաներիդ ծուխը սահող երամ դառած,
Իմ նազելի երամի մեջ երազ դառած:

Գուսան Աշոտ

ԵՐԵՒԱՆԻ ԳԻՇԵՐՆԵՐԸ

Երեւանի գիշերները կապուտակ,
Սիրոյ հազար երգ են վառել կրճքիս տակ,
Գարնան նման Երեւանը մեր ժպտուէ:
Քո սիրոյ հետ միշտ շողում ե իմ սրտում:

Երեւանի գիշերները հովասուն,
Մեր պարտէզում պայծառ հեքիաթ են ասում,
Մտէն ծաղկում չքնաղ դեմքն եմ քո տեսնում:
Կրճքիդ հեւքն, սրտիդ երգն եմ ես լսում:

Երեւանի գիշերները լուսավառ,
Ինձ դարձրել են սեւ աչերիդ սիրահար,
Նրբ կարօտով քեզ գրկում եմ, համբուրում,
Ինձ տեսնում եմ սեւ աչերիդ հայելում:

Դու ինձ համար ասող ես անմար:

Խօսք Ա. Գրաշիի Երժշտ. ԱԼ. Դոլուխանեանի

ՊԱԻՐԱ

Մեր մով սարերում, ամբան առաւօտ,
 Մի պախրա տեսայ կարճնաղբիւրի մօտ,
 Իջել էր ձորը մթին անտառից
 Ու ջուր էր խմում զուլալ աղբիւրից:
 Իրեն տեսել էր ջրի հայելում,
 Մարերի անուշ բոյրն էր վայելում,
 Արդեօք խմում էր, թէ համբուրում էր,
 Իր տեսքով տարուած գուցէ հարբում էր:

Ասի այ պախրա, մեր այս լեռներում,
 Ես եւր եմ կորցրել, նա էլ չի երեւում,
 Իջել էր ձորը մեղմիկ նաղբուրով,
 Գտնուկներէ հետ ջրին վազելով:
 Իրեն տեսել էր ջրի հայելում,
 Մարերի անուշ բոյրն էր վայելում,
 Արդեօք խմում էր, թէ համբուրում էր,
 Իր տեսքով տարուած գուցէ հարբում էր:

Ասի Աշոտն եմ, աղաչում եմ քեզ,
 Իմ կորած եարից թէ խաբար բերես,
 Ոչ մի որսկանի գնդակ չի առնի
 Ոչ քո ձագերին, ոչ քո սիրածին:
 Իրեն տեսել էր ջրի հայելում,
 Մարերի անուշ բոյրն էր վայելում,
 Արդեօք խմում էր, թէ համբուրում էր,
 Իր տեսքով տարուած գուցէ հարբում էր:

Գուսան Աշոտ

Ճայնագր. Ծ. Պատալեանի

ՍԱՐԻ - ՍԻՐՈՒՆ

Հաղար նազով եար հովերի հետ եկ,
Ծաղիկ փնջելով սարվորի հետ եկ,
Սեւ ձիուս վրայ ձեր գուղն եմ եկել,
Իռուզ փակ տեսել մոլոր մնացել:

Սարի սիրուն եար, սարի մեխակ բեր,
Ախ, չէ, ինչ մեխակ, սիրոյ կրակ բեր:

Հաղար մի ծաղկի մէջ ես մեծացել,
Ծաղկանց ցողերով մազերդ թացել,
Մազերիդ բոյրը հեռուից է գալիս,
Զեփիւռը բերում սրտիս է տալիս:

Սարի սիրուն եար, սարի մեխակ բեր,
Ախ, չէ, ինչ մեխակ, սիրոյ կրակ բեր:

Երբ քո հայեացքը երկնին ես յարում,
Լառ աստղերն ասես նոր լոյս են առնում,
Քո ձայնն են առնում հաւք ու հովերը,
Ախ, երբ կ'առնեմ ես քո մատաղ սերը:

Սարի սիրուն եար, սարի մեխակ բեր,
Սարի սիրուն եար, սարի մեխակ բեր,

Սարից է գալիս ես առուի ջուրը,
Բերում է, եար, քո բոյրն ու համբոյժը,
Աշոտ, թէ կարաս, քո երգ ու հանդով,
Նարիդ կախարդիք, թող տուն գայ հանդով:

Ախ, չէ, ինչ մեխակ, սիրոյ կրակ բեր:
Ախ, չէ ինչ մեխակ սիրոյ կրակ բեր:

Գուսան Աշոտ

ՆՈՒՊՈՒՄ ՆՈՒՊՈՒՄ

Նուպարի պոյը չինար է,
Աչքերը նուշ ու խումար է,
Մրեք օբոկայ լուսնի նման:
Ունքերը կեռ ու կամար է:

Արեւ ցոլաց արի քարին,
Նուպար կ'երբայ հանդը վերին,
Ով որ տեսնի իմ Նուպարին,
Զի մոռանայ ամբողջ տարին:

Նուպար կ'երբայ օրօր շորոր,
Նուպարին եարն կայնէ մոլոր,
Ախ, կը քաշէ գիշեր բոլոր
Վը պտտտի գիւղը բոլոր:

Ժողովրդական երգ

ՋԱՂԱՑՊԱՆ

- Աղջ. Ջաղացպան քո ցաւը տանեմ,
 Ինչ որ կ'ասես ականջ կ'անեմ
 Կեզ համար լաւ թե՛ կը մանեմ
 Աղա ցորենս տուն տանեմ:
- Տղջ. Ինչիս են պետք քո թե՛ կերը,
 Ուզում եմ քո սրտի սէրը,
 Թէ չտայ քեզ ինձ ջո մերը,
 Սորենդ առ ու տուն դարձի:
- Աղջ. Ջաղացպան, թող ծուռ մտքերդ,
 Քո ինչին է պետք իմ սէրը,
 Արի շոյի՛ր իմ մազերը,
 Աղա ցորենս տուն տանեմ:
- Տղջ. Ես ինչ անեմ քո մազերը,
 Կ'ուզեմ լինես սրտիս սէրը,
 Թէ սրտովդ չէ իմ սէրը,
 Տերենդ առ ու տուն դարձի:
- Աղջ. Ջաղացպան դու թաւան դու շէս,
 Ես վարդ լինեմ դու իմ խուշս,
 Գեղ կը տամ իմ կարմիր թուշս,
 Աղա ցորենս տուն տանեմ:
- Տղջ. Առանց սիրոյ ինչ է թուշը
 Առանց երգի ինչ է դուշը
 Թէ քեզ ուզե՛լ է ուրիշը,
 Սորենդ առ ու տուն դարձի:
- Աղջ. Ջաղացպան քեզ սլայծառ տեսայ •
 Արի դարձի՛ր մօրս փեսայ,
 Իրեմ սրտիդ փախաքն էս ա,
 Աղա ցորենս տուն տանեմ:
- Տղջ. Հէյ շան գտայ ես իմ սէրս,
 Ինչ յոյսերս, քեզ վարդերս,
 Եղի՛ր կեանքս, եղի՛ր տէրս,
 Օրհնեն թող մեզ հեր ու մերս:

ՀԱՂԱՅՍ ԳԱՏԻԿ ԳԱՏԻԿ

Ջաղացս պատիկ-պատիկ,
Աչքերը նրան հատիկ,
Ամեն քեզի տեսնելիս
Համ համբար ձուժ, համ զատիկ:

Ջաղացս մանի-մանի
Անուշ քունս կը տանի,
Իմ ետըը հանդուժ, չողուժ,
Իմ քունը ո՞նց կը տանի:

Ջաղացս ման եմ տուել,
Սիրել եմ, ջան եմ տուել,
Եօթը տաքի սիրողիւն,
Մեկ քը պայման եմ տուել:

Մշակումք թ. Ալբունեանի

ՀԱՄԱՅՈՒՆ ԶԱՆ

Եկէք ձեզ մեր դուռ տանեմ,
 Համայակի գովք անեմ, Համայակ ջան,
 Համայակին կ'առնեմ,
 Կարօտից չմեռնեմ, Համայակ ջան:
 Համայակի աչքերը,
 Մեր լուսը նկայ գիշերը, Համայակ ջան,
 Համայակին կ'առնեմ.
 Մերը սիրուս խառնեմ, Համայակ ջան,
 Ըշտարակի պողոթը,
 Համայակի սապոթը, Համայակ ջան,
 Համայակին կ'առնեմ,
 Բող անօթի մեռնեմ, Համայակ ջան:
 Համայակ ջան, Համայակ ջան,
 Հազար երնէկ սրտիդ սերին
 Բո աբտոյտ եարին
 Բո անշին քարին, Համայակ ջան:
 Ծառի վրայ կարմիր նուռ
 Սիրտս ընկել է մոմուռ, Համայակ ջան,
 Համայակին կ'առնեմ,
 Կարօտից չմեռնեմ, Համայակ ջան,
 Զուն դնեմ Բալեհ խաշեմ,
 Նստեմ երեսըդ աշեմ, Համայակ ջան,
 Համայակին կ'առնեմ,
 Մերը սիրուս խառնեմ, Համայակ ջան:
 Ծառի տակին հով քամի,
 Սիրուններին ո՞վ տանի, Համայակ ջան,
 Սիրեցիր, ինչո՞ւ չառար,
 Բեզ տամ զբողբ տանի, Համայակ ջան:
 Համայակ ջան, Համայակ ջան,
 Հազար երնէկ սրտիդ սերին,
 Բո աբտոյտ եարին
 Բո անշին քարին, Համայակ ջան:

ԽԱՆՈՒՄ ԿԻՆԸ

Կի՛նը-

Ասա տեսնեմ, որտեղ էիր, պարզերես, պարզերես,
Էլ մի ասա, որ վերջինն է, կը ներես
Հերիք եղաւ, կրակ վառես ինձ էրես, ինձ էրես,
Ռ՛ւր գնացիր, ո՛ւր մնացիր էս գիշեր,
Ասողերն ելան, օրն եղել է կէս գիշեր:

Մարդը-

Նոր է մթնում, մի խիղճ արա, այ կնիկ, այ կնիկ,
Առանց հարցնել գլխիս մի տայ, վայ կնիկ,
Ի՞նչն ինձ կ'անես ուրիշներին թայ կնիկ,
Նոր է մթնում, նոր է գալիս էս գիշեր,
Բայց դու սրան համարում ես կէս գիշեր:

Կի՛նը-

Հազնուել ու զարդարուել ես ոնց փեսայ, ոնց փեսայ,
Կարծում ես, թէ էտեղ չէի, չտեսայ,
Մայրամուտին ո՛ւմ հետ էիր, ինձ ասա, ինձ ասա,
Ռ՛ւր գնացիր, ո՛ւր մնացիր...*

Մարդը-

Այլ է տեսել քեզ պէս կնիկ այս դարում, այս դարում,
Ոչ գործում ես, ոչ լուսնում, ոչ կարում,
Ամբողջ օրը վրաս շնորհս հնարում, հնարում,
Նոր է մթնում...*

Կի՛նը-

Տանը թողած ինձ պէս մարալ սիրուն հարս սիրուն հարս,
Կ երթաս ուրիշ կանանց յետեւ ման կու դաս,
Գիշերներն էլ շունչդ կտրած տո՛ւն կը գաս,
Ռ՛ւր մնացիր, ո՛ւր մնացիր...*

Մարդը-

Հաւասն ասաց, էսպէս խանդոտ կնկանը, կնկանը,
Տանես գցես մարդագլխի ուռկանը,
Որ չտանջի խեղճ ու կրակ երկանը, երկանը.

ՄԻՍՄԻՆ-

/Մարդ/ Նոր է մթնում, նոր է գալիս...
/Կի՛նը/ Ռ՛ւր գնացիր, ո՛ւր մնացիր...*

Գուսան Հաւասի Խօսք մշակումն Հ. Առկասեանի

ԱՅ ԻՄ ԱՆԳԻՆ

Ինչո՞ւ մեր այգին ընկար,
Ինչո՞ւ իմ աչքին ընկար,
Առանց դուռը բանալու,
Ինչո՞ւ իմ հոգուն ընկար: /կրկ./

Ախ ի՞նչ անեմ ի՞նչ անեմ,
Ճարը գիտեմ՝ ճար չունեմ, /կրկ./
Ո՛չ իմ հոգուց դուրս ես գալիս,
Ո՛չ քո հոգում ինձ տեղ տալիս:

Այ իմ անսիրտ, այ իմ անսիրտ, իմ անգին: /կրկ./

Ինչո՞ւ ինձ հետ չես խօսում,
Բայց գալիս ես երազումս,
Քրոջում եք մինչեւ լոյս,
Միրում, սիրում ու յուզում: /կրկ./

Ախ ի՞նչ անեմ, ի՞նչ անեմ,
Ճարը գիտեմ՝ ճար չունեմ, /կրկ./
Կամ մօտս արի, հետս խօսի,
Կամ եւ մի գայ իմ երազին,

Այ իմ անսիրտ, այ իմ անսիրտ, իմ անգին: /կրկ./

Ճեռը շատերն են խնդրում,
Ինչո՞ւ մեկին չես ընտրում,
Թե ինձ համար ես պահեւ,
Եւ ինչ ես սիրտս կոտրում: /կրկ./

Ախ ի՞նչ անեմ, ի՞նչ անեմ,
Ճարը գիտեմ՝ ճար չունեմ, /կրկ./
Ո՛չ ուրիշին խօսք ես տալիս,
Ո՛չ եւ մեր տուն հարս ես գալիս,

Այ իմ անսիրտ, այ իմ անսիրտ, իմ անգին: /կրկ./

ՀՆՁԻՈՐԻ ԵՐԴԸ

Անուշ աղջիկ սիրաւէտ,
Սար գնացիր շարնան հետ,
Քանի ամիս անցկացաւ
Սէրըս դարձաւ վարար գետ:

Սարերի հովին մեռնեմ,
Էն կանաչ ծովին մեռնեմ,
Իմ եարի շահած, վահած
Ոչխարի հոտին մեռնեմ:

Արի եար ջան շուտ արի,
Կարօտել եմ տուն արի,
Արի ծաղկած լանջերով,
Ոտքդ շառնի մի քարի:

Ամէն անգամ հանդ գալով
Հանդից ել տուն դառնալով,
Սիրտս հալւում մաշւում է
Երբ անցնում եմ ձեր թաղով:

Գտներս եար ես արել
Ոչխարի թան ես արել
Էն տեղերն եմ հունձ անում,
Որտեղ քաղհան ես արել:

Արի եար ջան... .

Խօսք՝ Հր. Յովհաննիսեանի
Երաժշտ.՝ Ն. Սահառունիի

ՀՈՅ ԻՄ ՆԱԳԱՆԻ ԵՍԻ Ը

- Աղջիկ Ես աղջիկ եմ նազ ունեմ,
 Հոյ, նազանի եարը,
 Հաշիս շորը խաս ունիմ,
 Հանիմ, նազանի եարը,
- Տղայ Կորեբդ ծալ-ծալ, աղջիկ,
 Հոյ, եմ նազանի եարը,
 Այտերդ սեւ խալ, աղջիկ,
 Հան, իմ նազանի եարը:
- Խուժք նազանիմ եարը, հոյ, նազան եարը,
 նազանիմ եարը, հոյ, նազան եարը:
- Տղաներ Բոյդ շինարի ծառ, հոյ, նազան եարը,
 Ընկեւ եմ սարէ սար, շան նազան եարը:
- Աղջիկ Ասրերը կայոյտ քար ա,
 Ես իմ եարից համ չառայ:
- Տղայ Աղջի, մեռնեմ եդ նազիդ,
 Բող կուշտ նայիմ երեսիդ:
- Խուժք նազանիմ եարը, հոյ, նազան եարը,
 նազանիմ եարը, հոյ, նազան եարը,
- Տղաներ Մեռնեմ ես էն օրին
 Տեսնեմ սիրուն եարին:
- Աղջիկ Բերեւ ամոլը սարին չի,
 Ինձ տանելու տարին չի:
- Տղաներ Բոյ ես քաշել ինձ համար,
 Բեզ կը տանեմ ես ամառ:
- Տղաներ Հալ ուեց ձիւնը սարի,
 Իմ եար, դէ տուն արի:
- Աղջիկ Կատ ջահել ես տուն չունես,
 Հօրս մօտ անուն չունես:
- Տղաներ Բէ նա ինձ լաւ ճանաչի,
 Ազիզ փեսայ կը կանչի:
- Խուժք նազանիմ եարը, հոյ, նազան եարը,

- Աղջիկ Բամպակի հուշը մաքրեսք,
Ավտոյով հանդը կրեսք:
- Տղայ Ակօս-ակօս բաժանեսք,
Կոլխոզի հողում ցանեսք:
- Աղջիկ Զրեսք գետի պաղ ջրով,
Բախանեսք սրտով, սիրով:
- Տղայ Բամպակը քուլ-քուլ քուլ-քուլ
Մաղկեւեղաշտի վրայ:
- Աղջիկ Բամպակը թեւ-թեւ մանեսք,
Նոք կեանքի ուրախ երգով:
- Տղայ Աշնանը ջանաք անեսք,
Բերքն առատ քաղաք տանեսք:
- Աղջիկ Բամպակը թեւ-թեւ մանեսք,
Շաղկազարդ կտոր անեսք:
- Տղայ Շաղկազարդ շիթը բերեմ,
Ջան աղջիկ, քեզ շոր կարեմ:
- Աղջիկ Շորի մեջ ես շորորում,
Կոլխոզում մի հատ դառնում:
- Տղայ Շոր հագնես մեր բամպակից,
Ձուներս քեզ մրցակից:
- Աղջիկ Բամպակագործ եար ունեմ,
Սրտով սիրահար ունեմ:
- Միասին անպակը առաւ Լինի
Մեր հողը անպարտ Լինի:

ՄԵՐ ՁՈՒՍԳՈՎԵԱՆ ՍԻՆԿՈՆՈՒԸ

Մի շշուռն ճանաչեմ չի Լուսում այդուհի,
Մինչեւ Լոյս չկայ ոչ մի ձայն,
Բանկ են ինձ համար, մօտ են իմ հոգում,
Նրեկոները մոսկովեան:

Գետն է Լուռ հոսում, չի հոսում կարծես,
Արծաթից է նա Լուսնկայ,
Նրդն է մեղմ հնչում, չի հնչում կարծես,
Նրեկոն է հանդարտ այնքան:

Ինչի՞ր ս խեղ նայում դու այդպէս իմ սեր,
Մի նստի՞ր մոլոր, ու տրտում,
Կեզ ի՞նչպէս ասեմ, քեզ ի՞նչպէս չասեմ,
Ի՞նչ ինչե՞ր ունեմ իմ սրտում:

Արեւելքն արդէն ծիրանի հաշաւ,
Բացուեց օրը նոր հանդիպման
Միշտ յիշէ՞ր սիրով, դու ամբասն այս Լաւ,
Նրեկոները մոսկովեան:

Իօսօր Գոլմատովսկիի
Նրա՛շտ՝ Սոլովեով-Սեդոյի

ՂԱՓՈՒՄԵ

Հէյ շան ղափամայ,
Համով հոտով ղափամայ,
Հէյ շան ղափամայ,
Անուշ կաթով ղափամայ,
Ջան /կրկնել/:

Արազ հասած դդուամբ,
Սոանք բերինք մեր տունը
Մանր շաքարած աղեցինք,
Բընտրբին մէջը կախեցինք:

Հէյ շան, ղափամայ,
Մեղբո մէջը ղափամայ,
Հէյ շան ղափամայ,
Բուղբ մէջը ղափամայ,
Ջան, հէյ շան, հէյ, շան:

Հէյ շան ղափամայ,
Համով հոտով ղափամայ,
Հէյ շան /շան/ ղափամայ,
Ջան անուշ կաթով, ղափամայ, շան:

Իւղն երեսին կը ցուայ,
Ինչէ՞ պահէ չը ծորայ,
Ինչէս տարէք չը թափի,
Կարդ շորերս չաղտոտի:
Հէյ շան ղափամայ.....

Դճալ առած եկանք տուն
Հարկիբ հոգի անկշտուն,
Սս ի՞նչ անեմ, ի՞նչ անեմ,
Հարիւր հոգի մեկ դդում.
Մկան ել հեր ու հօբքուր,
Մկան ել մեր ու մօբքուր,
Մկան քեռի քեռեկին,
Խնամի ու տեքերկին,
Մկան սանիկ սանամեր,
Հարսն...քուր, հարնաղբեր,

Մկան մօտիկ հեռաւոր,
Զօքանչ, կեսուր ու քաւոր;

Ջան, հէյ շան.....:

Հէյ շան ղափամայ,
Ի՞նչ մեկն ուտի կշտանայ,
Հէյ շան ղափամայ,
Զուտողը, ի՞նչ իմանայ,
Ջան:

Ժողովրդական

ՍԵՐՍ ԳՈՒԼՏՆԻ ԲՈՂ ՄՆԱՅ

Սմայից կորաւ Լուսընկան,
Սրտեր մըտէք քունս,
Սրտով կ'անցնի իմ ճամբան,
Կ'երթամ եարիս տունս:

Սէրս գաղտնի թող մնայ,
Սէրս եարիս պէս,
Ճամբէն պիտի չիմանայ,
Թէ ո՞ւր կ'երթամ ես:

Թող ովքե՞ր գան

ՀԱՐՍ ԵՄ ԳՆՈՒՄ

Հարս եմ գնում,
Տանից հեռանում
Տասրեօթ տարեկան,
Նանի շան,
Սիրոյ տիրանում:

Ինձ բերել ես,
Սիրել, գոլբգոլբել,
Ամակդ ծով արել,
Նանի շան,
Իմ եարին տուել:

Անուշ կա՞րդ
Հալալ ինձ արա,
Բող լինի օրհնանքդ,
Նանի շան,
Սիշտ ել ինձ վրայ:

ԲԻՆԳԵՈՒԼ

Երբ բաց եղան գարնան կանաչ դռները,
Քնար դառան աղբիւրները Բինգեուլի:
Շարուէ շարան անցան զուգուած ուղտերը,
Նարս եւ գնաց եայլաները Բինգեուլի:

Անէին եարիս լոյս երեսին կարօտ եմ,
Նազուք մէջքին, ծով-ծամերին կարօտ եմ,
Քաղցր լեզուին անուշ հոտին կարօտ եմ,
Սեւ աչքերով էն եղնիկին Բինգեուլի:

Պաղ-պաղ ջրեր, պապակ շուրթս չի բացուի,
Ծռւի-ծռւի ծաղկունք, լացող աչքս չի բացուի
Դեռ չտեսած եարիս - սիրտս չի բացուի,
Ինձ ի՞նչ, աւաղ բլբուլները Բինգեուլի:

Մոլորուել եմ, ճամբաներին ծանօթ չեմ,
Բիւր լճերին, գետ ու քարին ծանօթ չեմ,
Բիւր լճերին, գետ ու քարին ծանօթ չեմ,
Թուրիկ, ասա, որն է ճամբան Բինգեուլի:

Խօսք Աւետիք Իսահակեանի
Երածշտօն Ժողովրդական

ԱՂՋԿԱՆ ԵՐԳ

Բեզ կանչում եմ եար, կարօտով անհուն
Աբի դու ինձ համար գարուն բեր, գարուն /2/
Բեզ սիրել եմ ես, իմ կեանքի գարուն
Ապասել եմ քեզ, կարօտ եմ ես քո գալուն,
Ապասել եմ ես, կարօտ քո գալուն: /2/

Կարդ եմ ես ճերմակ, դու կանաչ տերեւ,
Ես քո զով շուքի տակ, դու ինձնից վերեւ,
Բեզ սիրել եմ ես, իմ կեանքի գարուն
Ապասել եմ քեզ, կարօտ եմ ես քո գալուն,
Ապասել եմ ես, կարօտ քո գալուն: /2/

Մի եղնիկ եմ ես, դու որսորդ սարի,
Գանչում, կանչում եմ քեզ արի եար արի /2/
Բեզ սիրել եմ ես, իմ կեանքի գարուն
Ապասել եմ քեզ, կարօտ եմ ես քո գալուն
Ապասել եմ ես կարօտ քո գալուն:
Ին գալուն

Նրաժշտ.՝ Ը. «կաղտասարեանի»

ՍԱՐԵՐԻ ՀՈՎԻՆ ՄԵՌՆԵՄ

Սարերի հովիւն մեռնեմ,
Իմ եարի պոյիւն մեռնեմ,
Մի տարի ա չեմ տեսել,
Տեսնողի աչքիւն մեռնեմ:

Կանգնել եմ գալ չեմ կարող,
Լցուել եմ լալ չեմ կարող,
Մի տարի ա չեմ տեսել,
Տեսնողիւն աչքիւն մեռնեմ:

Ախ էնիմ արուն կու գայ,
Սեւ սրտիս գարուն կու գայ,
Խոչ էնիմ ես էն եարը,
Պըտըտուի գարուն կու գայ
Նար, եար, եար, եար, նա:

Հուսնակ, դու բարձրանց գընա,
Հոյս տուր ու բարձրանց գընա,
Հեռու տեղ մի եար ունեմ,
Բարեւ տուր, անցիւր գընա:

Նրաժշտ. Վ. Յ. Բաղալեանի

ՀԻՆՈՒԼԱ

Հովիւը սարում տխրեց,
Միբոյ երգը նուագեց,
Մըգը վառ այտերին,
Մըգը բոց աչերին,
Մըգը գուարը՝ օրերին:

Կրկ. Այ խեղճ հովիւ քեզ բաժին,
Խոր ձորում մնացիր,
Հինգալա, Հինգալա,
Մըգը վառ այտերին,
Մըգը բոց աչերին
Մըգը գուարը՝ օրերին:

Ահա եկաւ նոր դարուն,
իւ ծաղիկներ զարդարուն,
Գոյն-գոյն ծաղիկները,
Միբում եմ, հա, հա, հա,
Գոյն-գոյն ծաղիկները:

Կրկ. Այ խեղճ հովիւ քեզ բաժին,
Խոր ձորում մնացիր,
Հինգալա, Հինգալա,
Մըգը վառ այտերին,
Մըգը բոց աչերին
Մըգը գուարը՝ օրերին:

ՅՈՒՆԿԻ

Ամպի մէջ Լորիկ թռաւ
 Յոլակ ջան, ցոլ տու գնա,
 Բո սերն իմ սրտին դպաւ,
 Կնկադ հետ եոլա գնա:
 Ամպել ա ամպի տակին,
 Յողիկ ջան, ցոլ տու, գնա,
 Բեւը դիւր գլխիդ տակին,
 Մարդիդ հետ եոլա գնա:
 Գոլթանը մանի, մանի,
 Յոլակ ջան, ցոլ տու գնա,
 Անուշ քունս կը տանի,
 Կնկադ հետ եոլա գնա:
 Գոլթանը ման եմ տուել,
 Յողիկ, ջան, ցոլ տու, գնա,
 Սիրել եմ, ջան եմ տուել,
 Մարդիդ հետ եոլա գնա:
 Իմ դէյրէն ա վարդերով,
 Յոլակ ջան, ցոլ տու, գնա,
 Ծարս եկաւ արտերով,
 Կնկադ հետ եոլա գնա:
 Բէ դէյրէն ալ ու չի՞ ա,
 Յողիկ ջան, ցոլ տու, գնա,
 Ծս կ'ուզեմ, հերդ չի տա,
 Մարդիդ հետ եոլա գնա:
 Ծառին տակին հով քամի,
 Յոլակ ջան, ցոլ տու, գնա,
 Անուշ քունս կը տանի
 Կնկադ հետ եոլա գնա:
 Մատիս ոսկի մատանի
 Յոլակ ջան, ցոլ տու, գնա,
 Ավ սիրել ա, թող տանի,
 Մարդիդ հետ եոլա գնա:

ՀԱՐՍԻ ԳԱՆԳԱՏԸ

Ըս ինչ օրն եմ ընկեւ,
Ինչ տուն հարս եմ եկեւ,
Գլխու հազար տէր կայ,
Դրկիս շուխտ ծծկեր կայ:

Կեսուր ունեմ խանում-խալում,
Ոչ օգնում է, ոչ աշխատում,
Ձորս տալ ունեմ չորս ավարայ,
Ձորսն էլ նստած հողուս վրայ:

Մեծին աշեմ,
Շոքրին աշեմ,
Քանս մաշեմ,
Սեւ օր քաշեմ,
Սւլեմ, թափեմ,
Կտրեմ, կապեմ,
Լուամ կարեմ,
Մուխս մարեմ:

Ըս ինչ օրն եմ ընկեւ,
Ինչ տուն հարս եմ եկեւ,
Հասս միշտ ցամաք է,
Տեղս միշտ ծմակ է:

Կեսրար ունիմ իշխան-աղա,
Դիշեր ու զօր խմե, խաղայ,
Ձորս տեքր ունիմ չորս թուք ու մուր,
Դրկեցնեքի հետ հուր ու սուր:

Մեծին աշեմ... /կրկ./

Ըս ինչ օրն եմ ընկեւ,
Ինչ տուն հարս եմ եկեւ,
Գլխու հազար տէր կայ...
-Հազար արժող սէր կայ:

ԵԱՄԱՆ ԵՄ

Աղջիկ Մարերը կանաչ խոտով, եաման եար,
Սիրտս լիքն է կարօտով, եաման եար,
Շարս հնձից բեզարած, եաման եար,
Տուն կգա հանդի հոտով, եաման եար:

Տղաներ Եար շան, բախչեն ման արի, եաման եար,
Մեռնեմ բոյիդ չինարի, եաման եար:

Աղջիկ Ճերմակ ալուրը մաղեմ, եաման եար,
Մտնեմ բախչեն վարդ քաղեմ, եաման եար,
Շարս հանդից տուն կգա, եաման եար,
Ոտքերին ծաղկունք շաղեմ, եաման եար:

Տղաներ Կարօտել եմ իմ եարին, եաման եար,
Շարիս մախմուր աչերին, եաման եար:

Աղջիկ Ոչխարի մածուց մերեմ, եաման եար,
Հովի թեւով քուն բերեմ, եաման եար,
Շարս մեր դուռն է հասել, եաման եար,
Վզովն ընկնեմ տուն բերեմ, եաման եար:

Տղաներ Եար, տարվել եմ քո նազով, եաման եար,
Տուն եմ գալիս մուրազով, եաման եար:

Աղջիկ Լուսնակն ընկավ արտերին, եաման եար,
Զուր ցանեմ խաս վարդերին, եաման եար,
Շարս հանդիստ քնել է, եաման եար,
Մեռնեմ սրտի զարկերին, եաման եար,
Եաման եար, եար, եար:

ԿԵՐԹԱՄ ԻՆԵ ԶԻ

Հնձուորները նստան դադար առնելու,
Նարս գնաց աղբիւր սառ ջուր բերելու •
Ու էնտեղից երգող իմաց է անում,
Թէ մնում է, մնում է նա իմ գալուն:

Ջահել ու ծեր միտք են անում,
Նարիս կանչով կ'երթամ թէ չէ,
Սև ոչ մէկը չի իմանում,
Սրտիս ճամբով կ'երթամ թէ չէ:

Ջահելները գիւղում ելան շուրջպարի,
Բայց նրանց մէջ դուք չէք գտնիք իմ եարին
Հեռում նստած ոչ երգում է ոչ պարում
Ու հայեացքով անխօս ասում է արի:

Սսես ամբողջ գիւղն է նայում,
Նարիս կանչով կ'երթամ թէ չէ,
Մէկն ասում ոչ, մէկը՝ այո,
Սրտիս ճամբով կ'երթամ թէ չէ:

Գիշեր եկաւ ծաղկանց շաղիկն է իջնում,
Մի սրինգ է գետափին մեղմիկ հնչում,
Էն իմ եարն է ինձ է կանչում կարօտով,
Մեր գիւղն էսօր տեսնես, ինչո՞ւ չի ննջում:

Անգուն նստած միտք են անում,
Նարիս կանչով կ'երթամ թէ չէ,
Ու էնպէս թէ չեմ էլ նայում,
Սրտիս ճամբով կ'երթամ թէ չէ:

Ու սիրտս գնում է, գնում եարիս մօտ,
Ոտքերս մնում են, ամօթ է ամօթ:

Խօսքս Վահան Հեթումեանի
Ծրագրիս Վ. Նալսլանտեանի

ԵՍՏ ԻՄՕ

Նարիմօ, Եարիմօ,
Մեր դուռ, ձեր դուռ մօտիկ, մօտիկ,
Նարիմօ, Եարիմօ,
Էրթամ բերեմ հորթուն խոտիկ:

Նարիմօ, Եարիմօ, -
Բերեմ դնեմ մարին մօտիկ *
Նարիմօ, Եարիմօ, -
Տեսէք ո՞ւմ եարն է խորոտիկ *

Նարիմօ, Եարիմօ,
Մեր դուռ, ձեր դուռ եանա-եանա,
Նարիմօ, Եարիմօ,
Քամին զարնայ, ծոցեր բանայ,

Նարիմօ, Եարիմօ,
Պաշիկ մի տուր, չեմ դիմանայ:

Հայկական Ժողովրդական
Մշակուճ ԲաժուԼ Աեթուճեանի

ԵՐԳ ԲԱՐԵԳԱՄՈՒԳԵԱՆ

Արեւաշող դաշտերի մէջ մեր դաւար,
Նղբայրութեան երգն ենք հիւսել ոսկեւար
Թող հնչի ու թռչի
Լեզուներով ազգերի,
Բիւր ոսկեբառ:

Թող համայն աշխարհում,
Խաղաղութիւն լինի եւ յաւետ դարուն,
Թող հնչի ու թռչի,
Աղաւնու պէս մեր երգը,
Ողջ աշխարհում:

Ժողովուրդներ արեւի տակ անդադար,
Սէր բարեկամ լինեն իրար դարէ դար,
Կեանքն ուրախ,
Նրգ ու տաղ,
Մանուկների շրթներից
Լսուեն արդար:

Թող համայն աշխարհում •••• կրկ•

Թող շողշողան աղբիւրները բիւրակնեայ
Թող սէրն ասի սրինգն անուշ եղեգնեայ,
Երգն անուշ,
Բերքն անուշ,
Թող գետ դառնայ,
Կեանքի վառ ծովը գնայ:

Թող համայն աշխարհում ••••• կրկ•

Խօսք՝ Հ. Դոկասեանի
Երաժշտ.՝ Զ. Դողալեանի

ԵՐ ԵՒԱՆ

Իմ նոր Երեւան քո Լոյսով շողակ,
Իմ հայոց սիրտն է խնդում,
Դու Հայաստանի մեծ մայրաքաղաք,
Քո անմար Լոյսն է փայլում:

Ծաղկում ես դու Երեւան,
Լոյսի շքերթ Երեւան,
Հայոց համայն աշխարհի,
Յոյզերի ծով Երեւան:

Բոլոր ազգերին դու եզբայրացար,
Մայրենի Լեզուով յաւէտ,
Էն կաւէ գիւղից մի հրաշք դարձար,
Առուակդ դարձաւ մի գետ:

Ծաղկում ես դու Երեւան Կրկ.

Մի աիդ Մասիս, մէկդ Արագած,
Մայր Արաքս գետ իմ Երեւան.
Ողջ պանդուխտներիդ բեր գիւղդ ծաղկած
Որ դառնաս ծով, իմ Երեւան:
Հայոց ես դու, ամբոց ես դու,
Իմ գեղեցիկ Երեւան
Մի բերդ ես դու, յաւէտ ես դու, Երեւան
Նոր Երեւան:

Խօսք. Յ. Շիրազի
Երաժշտ. Զ. Գոզալեանի

ՄԻՐ ՈՒՄ ԵՄ ԵՍ

Միբուժեմ եմ ես քեզ ազգոյ
Հայաստանի աղբիւրները
Արագածի գիշերուայ պէս
Իմ սիրուհուն թուխ աչերը
Նրա գանգուր սեւ վարսերը:

Միբուժեմ եմ ես իմ հայրենի
Արարատեան անուշ բերքը
Կաքաւաքայլ աղջիկների
Հարսանիքի խաղն ու պարը
Լուսնկահեր զով գիշերը:

Միբուժեմ եմ ես մեր կուլտուրի
Ծով արտերի անուշ բերքը
Ու զախ երգով դաշտից դարձող
Իմ հայրենի աղջիկների
Հազարախինդ նոր խաղերը:

Միբուժեմ եմ ես հայրենիքի
Աշխատանքի հերոսներին,
Դազկահների բերքը գրկած
Իմ նորարար ընկերներին
Նոր կեանք, նոր խինդ կերտողներին:

Երաժշտ. եւ խօսք. Հայաստան Թակոբեանի

ԱՐՍՁ, ԱՐՍՁ

Արազ, Արազ, հէյ շան, Արազ,
Հէյ, Բինգեռից բխող Արազ,
Ալիքներով քո թխավարս,
Ռուր ես վազում ակով աւազ:

- Արարատեան դաշտն եմ գնում,
Դաւար արտեր ինձ եմ վնում,
Գնամ դարնան ջուր տամ նրանց,
Արար-վարար ջուր տամ նրանց:

Ռուր ես գնում դու վազեվազ,
Դարնան Արազ, ելման Արազ,
Դաշտով քաշած ջրանցքներով,
Ռուր ես գնում դու երգելով:

- Կուր անունով քոյբիկ ունեմ,
Գնում եմ ես նրան փարուեմ,
Կարօտ ունեմ, կարօտս առնեմ,
Նրգս նրա երգին խառնեմ:

Խօսք՝ Աշոտ Գրաշէի

Նրածշտ՝ Արտաշէս Խաչատուրեանի

ԵՍ ԻՄ ԱՆՈՒՇ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Ե՛մ իմ անուշ Հայաստանի,
արեւահամ բառն եմ սիրում,
Մեր հին սազի ողբանուագ,
Լացակումած Լարն են սիրում:
Արնանման ծաղիկների
ու վարդերի բոյբը վառման,
Ու Նայիրեան աղջիկների
հեղահուսն պարն եմ սիրում:

Սիրում եմ մեր երկինքը մուգ,
ջրերը ջինջ, Լիճը Լուսէ,
Արեւն ամբան ու ձմեռուան
վիշապաձայն փուքը վսեմ,
Միում կորած խրճիթների
են հիւրընկալ պատերը սեւ,
Ու հնամեայ քաղաքների
հաղարամեայ քարն եմ սիրում:

Ուր եւ Լինեմ, չեմ մոռանայ
ես ողբաձայն երգերը մեր,
Չեմ մոռանայ աղօթք դարձած
երկաթադիր գրքերը մեր
Ինչքան եւ սուր սիրտս խոցեն
արիւնաքամ վեճքերը մեր,
Եւ ես որք ու արնավառ
իմ Հայաստան եարն եմ սիրում:

Իմ կարօտած սրտի համար
ոչ մի ուրիշ հեքիաթ չկայ,
Նարեկացու, Գուչակի պէս
Լուսապսակ ճակատ չկայ,
Աշխարհ անցիր, Արարտի նման
ճերմակ գազաթ չկայ,
Ինչպէս անհաս փառքի ճամբայ
ես իմ Մասիս սարն եմ սիրում:

Երաժշտ. Սաթեանի

Խօսք Չարեանի